

ՍԱՂՄՈՍ 62

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված միակ ապաստարանը դավանանությունից	Աստծո փրկությանը սպասելու հանգիստ վճռականություն	Աստծո պաշտպա- նության մեջ վստա- հություն	Աստծո պաշտպա- նության մեջ վստահություն	Միայն Աստծուն հուսացեք
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը				
62:1-2	62:1-2	62:1-2	62:1-2	62:1-2
62:3-4	62:3-4	62:3-4	62:3-4	62:3-4
62:5-8	62:5-7	62:5-7	62:5-7	62:5-7բ 62:7գ-8
	62:8	62:8	62:8	
62:9-10	62:9-10	62:9-10	62:9-10	62:9 62:10
62:11-12	62:11-12	62:11-12	62:11-12	62:11-12

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 62:1-2

¹Հիրավի, իմ անձը Աստծուն է սպասում:

Նրանից է իմ փրկությունը:

²Նա է միայն իմ վեմն ու փրկությունը .

Իմ պաշտպանությունն է, ես խիստ չեմ սասանվելու:

62:1-2 Այս պարբերությունը նկարագրում է Աստծուն, ում սպասում է սաղմոսերգուն լուրջամբ (նկատեք, թե ինչպես է Սաղմ . 62:1-2 գրեթե նույնը ինչ Սաղմ . 62:5-6): Նա համբերությամբ սպասում է Աստծուն, որպեսզի գործի իր համար (տես՝ Սաղմ . 131:2):

1. իր փրկությունը Աստծուց է (BDB 447), Սաղմ . 62:1
2. Աստված է միայն իր վեմը (BDB 849), Սաղմ . 62:2,6, տես՝ Սաղմ . 61:2-ի գրառումը
3. Աստված է միայն իր փրկությունը, Սաղմ . 62:2,6
4. Աստված է նրա պաշտպանությունը, Սաղմ . 62:2

Այս Աստծո շնորհիվ, նա չի սասանվելու (BDB 556, KB 555, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ . 62:6): Սաղմ . 62:2-ում արտահայտությունը կրկնվում է 62:6-ում, սակայն 62:2-ը ունի ավելացված «խիստ» տերմինը: TEV, NRSV, JPSOA թարգմանում են այն որպես «երբեք»:

62:1 «անձը» Սա *nephesh* (BDB 659), որը ամբողջ անձն է մատնանշում: Սաղմ . 13:2, 16:9 և Ծննդ . 35:18 առցանց գրառումները:

❖ **«միայն»** Այս ՄԱԿԲԱՅԸ (BDB 36) հայտնվում է առաջին անգամ MT Սաղմ . 62:1,2,4,5,6,10-ում շեշտադրության համար և գրական ձևաչափի համար, որպեսզի Սաղմոսը համադրի իրար հետ: Հավատարիմ ապրելակերպի և մեղավոր ապրելակերպի մեջ առկա է բացառիկությունը (տես՝ Սաղմ . 62:4,9):

JPSOA տարբերակը թարգմանում է այն որպես «իրոք»: NKJV թարգմանում է միայն առաջին դեպքում որպես «իրոք»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 62:3-4

³Մինչև ե՞րբ եք մարդու դեմ չարություն նյութելու,

Դուք ամենքդ սպանվելու եք,

Ծռված պատի կամ խախուտ ցանկապատի պես եք լինելու:

⁴Նրանք միայն մտմտում են իր բարձրությունից նրան ցած զցելու մասին .

Սիրում են սուտը, իրենց բերանով օրհնում են,

Բայց իրենց սրտով անիծում են: Սեյա:

62:3-4 Այս պարբերությունը նկարագրում է անհավատ հակառակորդներին:

1. նրանք հարձակվում են (բառացի՝ բղավում են) – BDB 223, KB 243, *Polel* ԱՆԿԱՏԱՐ, ՀՈԳՆԱԿԻ. այս ԲԱՅԸ կարելի է տնել միայն այստեղ ՀԿ-ում և նշանակությունը սկիզբ է առնում արաբերեն արմատից:
2. նրանք փորձում են սպանել (բառացի՝ ցրել) – BDB 953, KB 1283, *Pual* ԱՆԿԱՏԱՐ, NET Աստվածաշունչ կարծում է, որ ԲԱՅԸ պետք է լինի *Piel* «դուք բոլորդ մարդասպաններ եք» (էջ՝ 927):
3. նրանք նման են (մի քանի անգլերեն թարգմանություններ տալիս են, որ Սաղմ . 62:3զ նկատի ունի սաղմոսերգուին, NRSV, TEV, NJB, JPSOA, REB):
ա. ծռված պատ – BDB 639, KB 692, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
բ. խախուտ ցանկապատ – BDB 190, KB 218, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
4. նրանք խորհուրդ են անում (BDB 419, KB 421, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) իր բարձրությունից նրան ցած զցելու մասին – BDB 632, KB 673, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ
5. սիրում են սուտը – BDB 953, KB 1280, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

6. նրանք օրհնում են (BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱԲ) իրենց բերանով, բայց իրենց սրտով անիծում են – BDB 886, KB 1103, *Piel* ԱՆԿԱՏԱԲ, հետաքրքիր է արդյո՞ք Հակոբոս 3:10 կապ ունի այս Սաղմոսի հետ:

Իրենց պտուղներից (Մատթ. 7:16-20) և խոսքերից (Մատթ. 12:34-37) կճանաչեք նրանց:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 62:5-8

⁵Ո՛վ իմ անձ, միայն Աստծո՛ւն սպասիր,
Քանի որ Նրանից է իմ ակնկալությունը:
⁶Միայն Նա է իմ վեմն ու փրկությունը.
Իմ պաշտպանությունն է, պիտի չսասանվեմ:
⁷Աստծուց է իմ փրկությունն ու փառքը:
Իմ գործության վեմն ու իմ ապավենն Աստված է:
⁸Ամեն ժամանակ Նրա՛ն հուսացեք, ո՛վ ժողովուրդ.
Նրա առջև բա՛ց արեք ձեր սրտերը,
Աստված մեր ապաստանն է: Սեյա:

62:5-8 Սաղմոս 62:5 և 6 գրեթե նույնն են ինչ Սաղմ. 62:1-2: Սաղմոսերգուն նկարագրում է իր գործողությունները որպես հավատարիմ հետևորդ, երբ համեմատվում է անհավատ հետևորդների հետ:

1. նա *հանգչում է* Աստծո փրկության և փառքի մեջ («պատիվ», BDB 458)
2. նա հանգստանում է (ենթադրյալ) Աստծո վրա որպես իր վեմը և գործությունը
3. Նա Աստծուն իր ապաստանն է դարձնում

Սաղմոս 62:8 փոխում է անհատական կենտրոնացումից դեպի հավաքականի (մի քանի անգլերեն թարգմանություններ սա առանձին պարբերությամբ են ներկայացնում): Այն սկսվում է երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ՝ դիմելով հավատարիմ հետևորդների համայնքին:

1. ամեն ժամանակ Նրան վստահեք – BDB 105, KB 120, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 37:3,5, 52:8, Եսայի 26:4: Դժվար մասը «ամեն ժամանակ» արտահայտությունն է, սակայն սա է խաղաղության և վստահության սիրտը (տես՝ Սաղմ. 34:1):
2. ձեր սրտերը Նրա առջև բաց արեք – BDB 1049, KB 1629, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, 1 Թագ. 1:15, Ողբ 2:19 (այսինքն՝ ազնիվ եղեք ձեր գգացմունքների և խնդիրների վերաբերյալ, երբ աղոթում եք Աստծուն, սա բավականին տարբերվում է «ըությունից» Սաղմ. 62:1 և 5-ից: Սաղմոս 62:1 և 5 սպասում են Աստծուն, որ գործի աղոթքից հետո և Սաղմ. 62:8-ը կոչ է աղոթելու):
3. Աստված է մեր ապաստանը – Աստված ոչ միայն անհատի ապահովության աղբյուրն է՝ վայրը, Նա հավատքի համայնքի ապահովության աղբյուրն ու վայրն է:

❖ «Սեյա» Տես Սաղմոս 3:2-ի գրառումը, նաև Սաղմոսների Ներածություն, VII:

62:5 «Աստծուն սպասիր» Սաղմոս 62:1-ում այս թարգմանությունը ճիշտ է, սակայն այստեղ առկա է մի հավելյալ սկզբնատառ՝ *Lamēnā* (ոչ թե ՆԱԽԴԻՐ), որի դեպքում ստացվում է՝ «Աստված Ինքը»:

❖ «Լուռ մնացե՛ք» ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (BDB 198, KB 226, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), որն այստեղ կիրառված է որպես ԳՈՅԱԿԱՆ (BDB 189), կիրառվում է Սաղմոս 62:1-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 62:9-10

⁹Արդարև հասարակ մարդիկ ունայնություն են,
Իսկ բարձրաստիճան մարդիկ՝ ստություն.
Եթե կշեռքի վրա դրվեն, ամենքն էլ ունայնությունից թեթև կլինեն:
¹⁰Կեղեքելու վրա հույս մի՛ դրեք,
Ու կողոպուտով ունայն մի՛ դարձեք,
Եթե հարստությունը շատանա,
Սրտներդ դրա վրա մի՛ դրեք:

62:9-10 Այս պարբերությունը դիմում է բոլոր մարդկանց՝ հասարակության տարբեր խավերից (այսինքն՝ հասարակ մարդիկ, բարձրաստիճան մարդիկ): Առանց Աստծո վրա ունեցած հավատքի՝ վստահության նրանք բոլորն էլ ունայնություն են (BDB 210 I) և ստություն (BDB 469): MT տալիս է «մարդկանց որդիներ» երկու անգամ: Թարգմանությունները ստացել են «հասարակ մարդիկ» և «բարձրաստիճան մարդիկ» խոսքերը Սաղմ.49:2-ի նմանօրինակ արտահայտությունից: JPSOA տալիս է «Մարդը միայն շունչ է, մահկանացուներ (BDB 35), ցնորք», որը հերքում է Սաղմոս 49:2-ի հետ առնչությունը որպես համագոր և թարգմանում է «Ադամի որդիներ» (BDB 9), իսկ «*Ish* –ի որդիներ» որպես համագոր և նկատի է ունենում բոլոր մարդկանց: Ինձ թվում է, որ Սաղմ.62:10 նկատի ունի աղքատի և անզորի շահագործումը Իսրայելի ավելի էլիտար խավի կողմից, իսկ Սաղմոս 49 դրա համար լավ գուգահեռ է:

Երկրորդ սահմանումը կիրառում է առևտրի կշեռքների նկարագրությունը: Եբրայերենում ծանր բաները պատվավոր և արժեքավոր են. այն, ինչ թեթև է (այսինքն՝ շունչը, BDB 210 I նշված երկու անգամ) անպատիվ է:

Սաղմոս 62:10 ունի երեք ՀԱՅՑԱԿԱՆ, որոնք հորդորում են անհավատ հետևորդներին:

1. կեղեքելու վրա հույս մի՛ դրեք – BDB 105, KB 120, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԺԽՏԱԿԱՆ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
2. կողոպուտով ունայն մի՛ դարձեք – BDB 211, KB 236, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԺԽՏԱԿԱՆ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. սրտներդ ձեր հաստության վրա մի՛ դրեք – BDB 1011, KB 1483, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԺԽՏԱԿԱՆ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

Այս պարբերության և Սաղմ.62:4-ի հիման վրա, մարդիկ, որոնց անդրադառնում է այս խոսքը, Իսրայելի էլիտար դասակարգի անդամներ են (այսինքն՝ կրթված, զինվորական, առևտրական):

62:9 «ունայնություն . . . շունչ» Սրանք երկուսն էլ Եբրայերեն տերմին (BDB 210 I) թարգմանություններ են: Սա Ժողովողի մեջ երկու կարևոր տերմիններից մեկն է: Տես իմ գրառումները Ժողովող 1:2-ում՝ առցանց տարբերակով www.freebiblecommentary.org

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 62:11-12

¹¹Մի անգամ խոսեց Աստված, ես երկու անգամ լսեցի սա,

Թե գորությունն Աստծուն է պատկանում:

¹²Ողորմությունն էլ է Քոնը, ո՛վ ՏԵՐ,

Քանի որ ամեն մեկին իր գործերի համեմատ հատուցում ես:

62:11-12 Այս վերջին պարբերությունը անդրադառնում է այն աստվածաբանական հարցին, թե ինչպես է, որ անարդարը բարգավաճում է (տես՝ Հոբ, Սաղմոս 37 և 73): Մովսիսական օրենքը առողջություն և հաջողություն է վերագրում ուխտի հնազանդության մեջ ապրողներին (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30): «Երկու ճանապարհները» (Սաղմոս 1, 2 Օրինաց 30:15, 19) նույնպես նույնն են հաստատում: Այնուհանդերձ, իրականում, հարուստները հաճախ շահագործող են, ազահ, դաժան, նենգ մանիպուլյատորներ, որոնք անձնավորում են Անկման էությունը. ավելի ու ավելի շատ իմ համար՝ ցանկացած գնով:

Մենք ապրում ենք անարդար աշխարհում: Աստված խոստացել է այն ուղղել: Դատաստանի օր է գալու: Մի օր մենք հնձելու ենք այն, ինչ ցանել ենք (տես՝ Հոբ 34:11, Սաղմ.28:4, Առակաց 24:12, Ժողովող 12:14, Երեմ.17:10, 32:19, Մատթ.16:27, 25:31-46, Հռոմ.2:6, 14:12, 1 Կորնթ.3:8, 2 Կորնթ.5:10, Գաղ.6:7-10, 2 Տիմ.4:14, 1 Պետ.1:17, Հայտն.2:23, 20:12, 22:12): Մի գիրք, որն ինձ օգնել է այս հարցում Հաննա Ուիդոլ Սմիթի *Քրիստոնյայի Երջանիկ Կյանքի Գաղտնիքը* գիրքն է:

62:11 Սա քաջ հայտնի, հաճախ արտահայտվող, երեք մասով ճշմարտություն հանդիսացող դարձված է (այսինքն՝ գորություն, ուխտի հավատարմություն և փոխհատուցում): Անկման պատճառով որոշ մարդիկ վերապրելու են ՅԱՀՎԵԻ գորությունը, ոմանք՝ բարեգորությունը: Մեր գործերը ցույց են տալիս, թե ով է մեր Հայրը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեգրույց հանդիսացող սերտոդության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞վ են տարբերվում Սաղմ . 62:1 և 5-ը Սաղմ . 62:8-ից:
2. Ո՞ւմ նկատի ունի Սաղմ . 62:3գ:
3. Ինչո՞ւ պետք է Սաղմ . 62:8 լինի առանձին պարբերություն:
4. Ո՞ւմ է ուղղված Սաղմ . 62:9-ը: Ի՞նչ կապ ունի այն Սաղմ . 49:2-ի հետ:
5. Թվարկե՛ք, թե ինչե՞ր էր Աստված ասել սաղմոսերգուին, իսկ նա մի քանի անգամ էր լսել: